

ՀԱՄԱՆՈՐԻՒԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 մը
Տարեկան (վեցամսեայ) համար	6 »
Սրբապատկերներ համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Աղետիկայի համար	3 շաբ.
Տարեկան	1.50 »

Մանուգրան տար աստիկ կտրուկ համար 10 ս. իսկ վերջին կտրուկ համար 20 սանթիմէր է. կտրուկ անցի անգրաններու համար 20 0/0 զեղչ կըրէ:

Վաճառքի համար մ'ոքի 10 սանթիմէր

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱՉԳԱՍՏԻՆ ԲԱՂՊԱՅՈՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՉՐ ՏՐՊԱԿՈՒՆ ԶՈՐԵԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եր դրամ դ. կիչ  
կրկնամսեայ համար  
ցիկն:

Редакция на вѣстникъ  
„Шаржумъ“  
Варна

Redaction du journal  
„Charjoum“  
Varna (Bulgarie)

Արեսասահմանի համար  
մեկն  
( 20 ՍԱՆԹԻՄ )  
Պուշկարիոյ համար  
մեկն  
( 15 ՍԱՆԹԻՄ )

Գրութիւնք էս չեն տրուիր

ՀԱՐԱԹՎՈՒՄԻ ԲԱՄԱՆՈՐԻ ԳՐՈՒՅՐԸ ԲԱՅՆԵՐԵՐ ԳԵՏԻ Ե ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵՐ

## ՆՈՐ ՏՄԻՒ

Ժամանակի անկումը կը հօշոյժ ունի ու կը հարկուի: Տարի մըն ալ գնաց թաղուիլ անհունութեան և անյատկան ծոցը ու սկսաւ նոր ծարի...  
Իսկ հալածուած Հայուն համար շատուց է, որ չկայ նոր ծարի, չկայ նոր բարի...

Թուակամները իրար յաջորդելով մեզ կը բերեն միայն սուգ ու սարսափ: 1903ին ալ զժբազդ Հայաստանի սիրը արիւնստեցաւ ու արիւնտեցաւ, ան չունեցաւ արեւոտ օր մը, վիշտ ու թախիծ եղան միշտ մեր ուր Հայրենիքի բաժինը, Հայաստան գերեզմանի սովորական տարիներին մէկն ալ անցուց: Վերջ աւոր կողքին Ռուսահայաստանը սակայն ապրեցաւ անսովոր օրեր:

Հոս բարբոսութիւն մտնելով հաւատարիմ իր աւերիչ ու բանգողի դարաւոր կոշտան սուր ու հուրով կը շանայ մեզ ընտելին ընեն, մեզ կոտորել: Սուր քաջութիւն գէտ սակայն կարելի է սուրով դուրս գալ և պաշտպանուիլ:

Հոն նենգ սլափօնը մեզ գէտ կը լարէ աւերի վտանգաւոր գաւեր, ան կուզէ խնդրել հայի նորափթիթ կուտուրը և այսպիսով մահացու հարուած իջեցնել հայութեան սրտին ու հոգիին: Զէ՛ որ հայը միշտ համակերպած է իր վիշտ դրամած ամենամանր և ամենանարգ լուծին: 1903 թուակամին սակայն կատարուեցաւ պատմական փառաւոր գէպ մը և ապացուցուց, որ այդ կարծիքը հայուն մասին բոլորովին սրտալ և անհիմն է: Այդ թուակամը ցցուց ինչ հայի հոգին քնացած առիւծ մըն է, որու վարժունուր անապատներ կը թնկանցնէ ու լեռներ կը դղրդացնէ:

Բայց այս ամենը անգիտակցելով ուսական հոյք բռնապետութիւնը գրաւեց մեր եկեղեցական կուլուածները, դժուար դրութեան մէջ գրաւ մեր կովկասի բարձրագոյն դպրոցները: Ան եկաւ փառաւոր դիմագրու-

թիւնը: Այս ահաւոր ու անհատուար կոտորածը մէջ վերջ ստացաւ և կովկասահայութիւնը ու ողբոց էր նահատակները:

Միեւնոր ժամանակ երբ կովկասահայութիւնը անդին կայեկոծուէր՝ հանդարտ չէր նաեւ ճաճկահայաստանը: Դաշնակցական խումբերու յաղթական յառաջխաղացումը: Սասնոյ սմբը լեռներու մէջ ֆէդայիներու Երևանը անհանգիստ էր ըրեր թուրք կառավարութիւնը, որ սկսաւ նորէն արիւնտ ծրագիրներ կայմել: Սասունը պաշարուեցաւ և կը գտնուէր— ինչպէս սասունցի բնակչութեան և այն տեղի յեղափոխականներու Անգլիոյ հիւպատոսին ուղղած նամակները կը ցուցնեն— վտանգաւոր կացութեան մը մէջ:

Ռուսահայաստանը և Տաճկահայաստանը ահա՛ կայմակերպուած: Բռնաւոր պետութեանց գէտ կը գտնուին անհաւասար պայքարի ու մաքառումը մէջ և նոր ծարին մեզ կը բերէ ծանր, խիստ ծանր դրութիւն ու վճակ:

Այո՛, մենք չունեցանք հին տարւոյն մէջ պայծառ օր մը, որ նոր յոյսերով ողջունէինք: Այս ծարին բայց հեռու մեզ վըհատութիւնը: Թէ և հին տարւոյն մէջ չեղան արեւոտ օրեր, բայց եղան արեւը նախազգարաւ արշալոյսներ: Մեր բաժնը կը փաստեն կովկասահայ փառաւոր գիւմադրութիւնները, մեր զինակիր խումբերու Հայաստանի մէջ կատարած յաղթական արշաւանքները:

Այս ամենուն մէջ էն մեզ ծագած է ուրեմն ցանկալի նոր ծարին— այն է ազատութեան ոգին, որ հայութեան մէջ կը գործէ օր ըստ օրէ աւելի մեծ նուաճումներ և կը մզէ մեզ գէպի Բեղափոխութիւն, որմէ պիտի ծնի և մեր փրկութիւնը:

Ուրեմն շնորհաւոր ըլլայ անոր գալուստը մեր մէջ:

Մարգարէի

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

6 Դեկտ. 1903 Քաւրիզ

Նախորդ նամակովս խոստացի էի այս նամակս ներել Սարգստակաւոր առաջնորդ Եղիշէ Վ. Ի գործունէութեան: Բայց պարտք եմ համարում շնորհակալութիւնս յայտնել յարգելի դոկտոր Կ. Փաշաեանին, որ իր ընամակ թաւրիցիներին— սլ ազատեց ինձ այդ ճակատից: Բնութեցողի ուշադրութիւնն ենք հրաւիրում, նախ յարգելի դոկտորի նամակներին, ապա Թիֆլիզում հրատարակուող «Տարագր շարժաթերթում» ու 33ր մէջ Պ. Մուրաթ Յարութիւնեանի յօդուածին և ապա մեր հետեւեալ մի երկու փաստերին, որով կարող կը լինի ինքնորոշը, որոշ գաղափար կազմել Թաւրիզի առաջնորդ Եղիշէ Վ. Ի մասին:

Ոչ միայն Եղիշէ վարդապետը Սարգստակաւոր կանակին է ծնունդ և աւտում, որ քանի ինքը խալիֆա է՝ նա էլ դատաւոր կը լինի, այլ և այն ժամանակ, երբ Սալմաստի հարստահարած ժողովորդը արցունքը աչքերին դիմում էր իր հոգեւոր հօրը իր դարձի գարման, ետին մահաւան խնդրելու, այո՛, այդ ժամանակ իրաւապէս(°) առաջնորդ խնդրութիւն է ունենում հետապրով և նամակով շնորհակալութիւն յայտնել Սարգստակաւոր փառաւորութեան համար Թաւրիզի Բարձր Ինքնառնութեան աստուծոմ սյր անում է այն ժամանակ, երբ Սալմաստի ժողովորդը սպասում էր, որ Եղիշէն կարող կը լինի Սարգստակաւոր պաշտօնանկ անել տալ:

Մի գիւղացի հայ ապստամբ է մի անգամ մի պարսիկ իշխանի, որովհետեւ վերջինս իշխաներով կոտորած է լինում հայի արտը թէ պարսկալը: Անցնում է զէպէն 6-7 տմիս. ինչ որ հրահրուելիս արշաւան, ապա ապակ խմած պարսիկը մահում է. բռնուած են խեղճ գիւղացուն, իբր նրա ապստակ: հետեւեալն է, որ իշխանը մեռաւ, այդ միայն կաշառակեր գառաւորներին հասկանալի գառապարտութիւնը սեղի է ունենում այն ժամանակ, երբ թեմակալ առաջնորդը Սալմաստ է լինում: Անապատելի գէպէց շմած հայը դիմում է առաջնորդին, աղաչում, պաշտում է, որ մի կերպ վերջ տայ այդ խնդրին. առաջնորդը միտ այսոյ կողմի է թողնում: Մի օր փառաւորական երբ հաւաքուած են Սարգստակաւոր(°) մտ մի կերպ վերջացնելու այդ խնդիրը, մեղաբարձ հային էլ կանգնեցնում են ճանապարհին:

(°) Հաստատ չը գտնու Սարգստակաւոր թէ գառաւորի մտ են գնում:

զիտեալով որ առաջնորդը կառքով պիտի անցնի այնտեղից, որպէսզի նորից խնդրի նրան. երեւում է կատարուած բազմաձ քաջ հովիւր(°), որքան խեղճ մարդը լալով խնդրում է. Եղիշէն պատասխանում է. մաւ, դու գնա՛, առա վերջացնեն, ես յետոյ կը կարգադրեմ:»

Կարգադրում է այնքան լաւ, որ խեղճ գիւղացին զրկուած է բոլոր ունեցածից և այսօր էլ տընում է 250 թուման պարտքի տակ:

Եղիշէ Վ. Ի թեմաքով թակել է թաւրիզում մի ծերուէն, որովհետեւ կասկածել է նրա կնոջ բարոյական վայ: Բայց նոյն Եղիշէ Վ. Ի, նոյն ձեռքերով շատ անգամ սեղմել է ուրիշներին ձեռքերը, որոնց բացարձակ անբարոյականներ է համարում, և որոնց մասին իրեն իսկ արդարադատ ձեռքերով դրամա է գրել, բայց այդ չէ խանգարում մտտիկ յարաբերութիւն պահել, բարեկամներ լինել նրանց հետ...:

Սրանով վերջացնում ենք մեր ասիւրք այդ սեւահոգի վեղարաւորի մասին և մի սեւ խաչ ենք դնում նրա գոյութեան վրայ:

Ոսկան Ս.

## ՄԱՏՆԱԽՈՒՄԿԱՆ

Կովկասեան վերջին Գրեցի է. Ակնունի. Եւ. Ժընիկ զին 3 փրանկ:

Պ. Ի. Ակնունի՛ երեք տարիներ է ի վեր «Դրոշակ»ի գրեթէ ամեն թիւի մէջ «Կովկասեան խաբրիկներ» վերնագրին տակ կը գրէ կովկասի հայ հասարակութեան արնկերական և զիւանդորտական հարցեր շոշափող զանազան թղթակցութիւններ, որոնք այնքան մեծ հաճոյքով կը կարդայուին և զղուանքով կը լիցնեն ընթերցողի հոգին գէպի Ռուս բռնակալութիւնը, որ կը ձգար խնդրել հայի նորափթիթ քաղաք սկրիթութիւնը իր մանուկ հասակին մէջ:

Այժմ Պ. Ակնունի «Դրոշակ»ի այդ թղթակցութիւնները առանձին պիտի լինեն մը մէջ ամիսիկուսի սիրուն գաղափարը յղացած ու զանոնք լրացուցած է նոր յանելումներով: «Դրոշակ»ի խմբագրութիւնը զայն հրատարակած է «Կովկասեան վերջեր» խորագրով:

Երոյական ճաշակով, ընտիր

թուղթով ու մաքուր տպագրութեամբ մը լոյս տեսած է այս գիրքը, պարագայ մը որ պատիւ կը բերէ հրատարակիչ մարմինը։

Գիրքը կը բաղկանայ 368 ութնամյա էջերէ, ուր կը պատկերացուի կողմասի Հայ ժողովուրդին աշխարհ տարիներէ ի վեր ստացած անբուժելի վէրքերը, որոնց միակ բուժումը կարելի է ցարիզմի տապալումով։

«Երօջակ» խմբագրութիւնը գրած է յառաջաբան մը և ահա թէ հոն ինչ ըսած են. «Վերքերը շատ են քունքն ամբ սեւաւոր պատմութեան ընթացքում, շատ ունենք և այժմ։ Առ այդ ցաւաւոր վէրքերի երկարածիք շարքին աւելցաւ մի նորը՝ շնորհիւ այն տիրապետութեան, որից երբեմն պէտք է հայաստանի ճիշդինակը ամբողջ Արարատեան աշխարհի հետ միասին բուժումը էր սպասում։

«Երօջակ» խմբագրութիւնը գրած է յառաջաբան մը և ահա թէ հոն ինչ ըսած են. «Վերքերը շատ են քունքն ամբ սեւաւոր պատմութեան ընթացքում, շատ ունենք և այժմ։ Առ այդ ցաւաւոր վէրքերի երկարածիք շարքին աւելցաւ մի նորը՝ շնորհիւ այն տիրապետութեան, որից երբեմն պէտք է հայաստանի ճիշդինակը ամբողջ Արարատեան աշխարհի հետ միասին բուժումը էր սպասում։

Ամբողջ գիրքը կը բաղկանայ 22 նամակներէ, ուր արձանագրուած են ամբողջ փաստեր։

Գրքին մէջ շոշափուած է եկեղեցական կալուածներու բանի և ապօրինի գրաւումը՝ Ռուսոյ առաջին քանակութեան կողմէ, որ ոչ միայն հայ ալ և ամբողջ քաղաքակիրթ սղգերու պայայտման շարժեց։

Ամէն հայ ունենալու է այս գիրքը, ընթերցողը անկէ պիտի տեղեկանայ թէ Ռուս կառավարութիւնը ո՞րչափ ժամանակներէ ի վեր թէ՛ գաղտնի և թէ՛ բացարձակօրէն աշխատած է ու կաշխատի խել կողմասի հայոց բոլոր իրաւունքները (1) և ի՛նչ միջոցներ ի գործ դրած է ու կը

(1) Այս առթիւ յիշենք որ հանգուցեալ Մելքիսեդեկ Սրբազան, իր Ս. Էջմիածնի կաթողիկոսական աթոռի զբոսնէն յետոյ՝ Պոլիս 1888ին գրած է «Երկու խօսք Ռուսահայոց կրօնական և կրթական վիճակին վրայ» անուն գրքով մը, որով գրեթէ միեւնոյն խնդիրը կը շոշափէ։

զնէ պանոնք Ռուս տարրի հետ ձուլելու համար։  
Մենք անհամբեր կըսպասենք Խ. հատորի լոյս տեսնելուն։  
Վարուժան  
Իգմիր 25 Դեկտ. 1903

ԿՈՒՂԱՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՆԵՆԷՆ ՆՄՈՅՆԵՐ

Ա՛խ, սիրտս անէք ու սիրտս անտէր որբուկի նման, Ձօր-զիշի կուլայ, քունք դադար չունի։  
Ու ինչպէս մօրը, հարազատ մօրը, սիրտս կը կանչէ,  
Որ գիրկն ընկնի, ծով կարօտն տանի...

Մէրս մեռեր է ու կանանչ մեռեր, ու յետ չի դառնայ, Իմ խեղճ. իմ ո՞ր սիրտս, ի՞նչ քան մարտօքիս,  
Էլ քեզ գուրգուրող ու քեզ գուրգուրող պիղ մեր չըկայ,  
Ու նանիկ ստող, որ անուշ քնիս...

Ա՛խ, առանց ծաղկի ու առանց վարդի իմ դարունն անցաւ Ու խեղճ ըլլաւ շատ կանուխ լոյսը, Էն սեւ ու բուրբ ու սեւ ու բուրբ շոր գլխովս անցաւ, Բլբուլս անհուն թեւերը թափեց...

Է՛խ, իմ դարաքաջ ու իմ դարաքաջ շոր գլխուս անեմ, Գամ թափառելու ափերդ, Արազ(ը)՝ Քարէ արտասուքս, արիւն արտասուքս շրիւղը խառնեմ, Կա՛մ թափառելով ափերդ Արա՛զ։

Է՛յ աղիզ Արա՛զ, ինձի օլորի արգասիք գրչորով Գու գառ ափերուն, ու ռիններուդ մէջ Մեզմ ախիբիբիդ, լուս ախիբներդ անուշ նանիկով Ու ինձի քունք գիր ու ռիններդ մէջ... Աւեփի՛ իս: Խալիքան (Մուրճ)

Ռուսչուկ 28 Դեկտեմբեր 1903

Այսօր՝ արական վարժարանի օրահում տեղի ունեցաւ մանկական ցերեկային ի նպաստ մանկապարտէզի (սա Յունվար 1ի տեղի ունենալիք ցերեկային է)։  
Ներկայ էր երկսեռ բազմութիւն, Սրահի պատերը զարեւ էին թանկագին զարդարով։

Հայ մանկիկներ, ժպտող է և ուրախ հանդէս էին զալիս, պարում էին, ցատկում ու, թոթովում զանազան ոտանադրներ, Յետոյ տեղի ունեցաւ ասանածափ նէկրներ թաշխումը, որը կատարուեցաւ սեկայն հակամանկավարժական ձեւով։

Հանդէսի միջոցին Սր. Զապէլ Պալճեան յուզիչ շեշտով արտասանեց Նարիբի «Նշուղ»-ը։

Պ. Պապեանի խմբի կողմանից ներկայացուց մի ծիծաղաշարժ կատակերգութիւն։

(\*) Արաքս կամ Երասխ գետը ժողովուրդը կը կոչէ Արազ։

Հանդէսը վերջացաւ ո՞նոր տարույր բերնոյթը ներկայացնող մի կենդանի պատկերով։

Այստեղ թող ներուրի մեջ մի նկատողութիւն անել, Միջոցները շատ երկար էին լինում, սրահի օդը ապակեանուէր պատուհաններէ ծածկուած լինելու պատճառով։

Յերեկոյթը տեւեց՝ կէսօրայ 2րդ մրնչեւ ժամը 6ը։

Հասոյթը մօտաւորապէս 800 ֆր.ի հասած կը լինի վիճակահանութեան տոմսերն էլ հաշուած։

Հոս վերջապէս տեղն է՝ ո՞նտեժտա՞ խմբին շնորհակալութիւն յայտնելու որ այս անգամ էլ մասնակցել էր ցերեկային և աւելացրի նրա փայլը։

— Երանից առաջ խոմբը աչոյ կերպով ներկայացրեց Մարի Ժոննա՝ ի նպաստ Աղքատախնամին, որից գոյացած է 100 ֆր. արդիւնք։

Սիրակ Արամեան

ԳԱՆՆԱԿՅԱԿԱՆ ԹԷ ՀԻՆ ՇՆՁԱԿԱՆ ԽՍԲԵՐ

Պաթուճ, նոյ. 20, 1903

«Երիտասարդ Հայաստանի» թիւ 19ին մէջ ի պատասխան «Հայրենիք»-ին կարգաւով, որ երկիր մտնող խումբերը հին հնչակեաններ են եղած և ոչ թէ դաշնակցականներ, հետաքրքրեցայ բուն ճշմարտութիւնը իմանալ, օգտուելով ճանապարհորդութեան, նախ անոր քննարկութեան, Ալէքսանդրապոլ, Խիֆիդ և Պաթուճ, գործին տեղեկ անձնատրուութիւններէ ստոյգ տեղեկութիւններ քաղելու, և վերջապէս եկայ այն համոզման, որ կողմաս գտնուող հին հնչակեանները այդ մասին սխալ տեղեկութիւններ հաղորդելով Պաթուճի իրենց ընկերներուն, մոլորցուցեր են նաեւ ուրիշ լիբերալ խմբագրութիւնը։

Ինձի համար կարեւորութիւն չունէր խնդիրը, — գործի յաջողութիւնը և միջնորդական կողմը նկատի ունենալով, ես անկեղծօրէն աւելի պիտի ուրախանայի եթէ երկիր մտնող խումբերը հին շակեանները եղած ըլլային, զէթ առ ապացոյց պիտի ըլլար, որ այդ կուսակցութիւնը երկար գործադուլէ ետք, սկսած է իր ուժերը հաւաքել և գործել հայրենիքի սպասուածքներու համար։ Բայց քննութիւններու արդիւնքը իս յոսասխափ բրաւ, մասամբ ուրիշ կը գրէ, որ հնչակեան երկու խումբեր անցեր և տեղս շարունակ են, իսկ խումբ մըն ալ վերջին օրերս տեղ հատու մեծ յաջողութեամբ։

Մինչեւ թեթիւն ուտ յայտարարած օրը՝ հնչակեան խումբեր

ԵՐԲԷ՛՛՛ երկիր մտած չեն, մտնողներ եղած են դաշնակցական խումբեր — ահա իրողութիւնը։

Հ. Յ. Գաշնակցութեան առաջին խումբին ապահով երկիր մտնելուն մանրամասն օգտուելի նկարագրութիւնը գրած ըլլալով, երբ և Ալ. շրջանին մէջ ձեռքէ ձեռք անցած և կարգապահ է, Այդ բանէն օգտուելով հին հնչակեանները ջանացեր են ժողովրդին ցոյց տալ թէ անցնող խումբերը հնչակեաններ էին և թէ նրախան սօսանդակութեան կը կարօտին — այս բանը ստոյգ փաստերով ձեռնարկէ երեւանի մէջ, Սրգ, շատ հաւանական է, որ երկուստեք շրջանին մէջ զտնուող հին հնչակեաններէն մէկը միամտաբար կամ գիտակցաւոր նոյն ձեւով հաղորդած է ուրիշ լիբերալներուն։

Ինչպէս ըսի, մինչեւ այդ լուրին հրատարակուել ո՛ւն է հինչակեան խումբ երկիր չէ մտած։ Միայն վերջերս հին հնչակեանները կուզէին 18 հոգի (Կ. շրջանէն) երկիր մտնել, բայց Ալ. մէջ ի լեւնց 7 զէնքերը և 2 մարդը ձեռնարկուելով՝ չկրցան երկիր անցնել — ահա միակ շարժումը, որ հին հնչակեանները կատարած են։

Թէ և այդ իրողութիւնը շատ ցաւալի է, բայց միւս կողմէ զէթ այն միջնորդութիւնը ունինք, որ վերջերս հին հնչակեանները անկեղծ փափաք կը ցուցնեն երկիր մտնել և այնտեղ գործելու։ Յոյս ունինք որ այս առաջին անյաջողութիւնը չի յուսահատեցնիր իրենք և աւելի մեծ եռանդով կը գործեն, և երկիր մտնելով սուրբ Գործին օգտակար կը ըլլան, անշուշտ համեմատելի ջանաւով երկրի մէջ արդէն զտնուող և գործողներուն։

ԹԱՓԱՌԻԿ Հայրենիք

X. քաղաք, նոյ. 18 1903

«Հայրենիք» ի խմբագրութեան Ձեր պահանջին վրայ Պարսկաստանէ ինձի կողմէն հետեւեալ հարցերը —

- 1. Հնչակեան խմբեր անցեր են երկիրը։
- 2. Սասունը պաշարած էրբ է այս ամսուր։

Միեւնոյն ժամանակ կարեւոր նամակի ծոցով ինձի խրկեր էին կտոր մը որ հրատարակուած է «Երիտասարդ Հայաստան» ըսած թերթի մը, որ կը պնդէ թէ հնչակեան խմբեր անցեր են եւ թէ Սասունի պաշարումը «Հայրենիք» ի խմբագրի հնարած բան է եւ ոչ իրականութիւն։

Երկու հարցերուն էլ ժամանակին պատասխանել եմ, առանց այդ տեղի անցողութեան տեղեկ ըլլալու միայն հիմունք աշխարհի տեղեկութիւններուն վրայ։ Սակայն այժմ ալ աւելորդ չեմ համարիր քանի մը խօսք աւելցնել։

Ա. — Ոչ մէկ հնչակեան խումբ Ձէ



ճաշակի ու ձեռի ինքնուրոյնութիւնը :

10. Անպայման արգիւել տներում և դուրսը միմիանց հետ խօսել ուսուսերէն կամ թուրքերէն, զսպել խօսիւ ամեն քայլ որ մտնեցնում է ուսուսցման :

11. Արմատացնել, ընդհանուր սովորութիւն դարձնել օտարից խոյս տալը, վերջ դնել դաշտնով նրանց կեանքին՝ որ ուստի հետ կուգնն աւմուսնանալ :

12. Արովհետեւ ուսուսացած հայերի վրայ՝ արագածի չըջանում մասնաւոր փայտայանք է տածում կառավարութիւնը, որպէսզի միացաներին էլ հրապուրէ, հետեւարար երեւոյթը վտանգաւոր, օրինակը վարակիչ է, սեւաթի ձեռք առնել խիստ ուժեղ միջոցներ, և արմատը չըջնել :

13. Ասանաւորներ, որոնց ծնողներինց մին հայ է, միւսն օտար, այժմ ամեն տեղ կատարում են լրտեսի պաշտօն, սրանց և վերոյիշեալների համար ծանր միջոցներ :

14. Զարգացած պրօպագանդիստներ պահել : Մշակել ծրագիր պրօպագանդիստների համար՝ որպէսզի իրենց գործառնութեանց մէջ աստիճանաբար առաջնորդին, այդ ծրագրի մէջ որոշել նիւթերը և դասաւորել ամեն ինչ շարքով :

15. Երկու կուսակցութիւնից նշանակուած՝ երկուսի ծաղրով, պատահաւոր տեւորական խմբեր ունենալ, որոնք ոչ այս և ոչ այն կուսակցութեան գաղափարական վէճերին պիտի մասնակցեն, այլ միմիայն երկու կուսակցութիւնը վրձնենք պիտի իրագործեն ամենայն կարգապահութեամբ :

(Երիտասարդ Հայաստան)

Մենքեան տներու առթիւ մեր յառաջիկայ շորեքշաբթուայ թիւը լոյս չպիտի տեսնէ :

Վ Բ Ի Պ Ի Կ

Սուլինայի մէջ ի նպաստ Հ. Ռ. Դաշնակցութեան եղած հանգանակութիւնը պէտք է կարգալ 1000 Ֆր. և ոչ թէ 1000 զրշ. ինչպէս մեր նախորդ թիւին մէջ սխալմամբ հաղորդուած էր :

Ն Ե Ր Ժ Ռ Ի Ը

1904ին զօրքերին թիւը 6000ով աւելի պիտի ըլլայ 1903ի զօրքերէն :

— Պուլկար կառավարութիւնը Գրէօղոսի հետ բանակցութեան մէջ մտեր է գնելու այն տասերկու բաթթիները, որոնք հարաւնիքի կեան պատերազմի միջոցին պատիրուած էին պօսէրներու կողմէ :

— «Թան» կը հաղորդէ որ Պօրիս Սարաֆօֆ Հոսմ հասնելով գացեր է Ռիչլօտի Կարկապատին գիւղը ասոր առաջարկելու հրամանատար ըլլալ : Կը կարծուի որ կարիպատի այդ առաջարկութիւնը կրնայ ընդունիլ միայն լուրջ երաշխանութեամբ մը, որ Մակեդոնացուց պատմութիւնը :

Թիւնը միայն Մակեդոնոյ անկախութեան համար է, բայց ոչ թէ ի նպաստ Աւստրիոյ կամ Ռուսիոյ շահերուն :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Պաշտօնական պարբերներէ կիւմացուի որ մինչեւ հիմա Մօնաթրի նահանգին մէջ վերաշինած են 4345 տներ, ապացոյց թուրքերու բարբարոտութեան որ տեղի ունեցեր է Մակեդոնական այս ամբան շարժումներու միջոցին :

— Ինկանմար մէկին Տիարպէքիր հասեր են 260 Մակեդոնացի քարտեալներ, որոնց մէջ կը գտնուին և շատ մը քահանաներ, Աքոթեալներէն 7 հոգի ճամբուն մտեր են, զօրքերու կ'պիտ վարմունքի պատճառով : — Զինուորական իշխանութիւնները նախազգուշացուելով, պուլկար հրոսախմբեր երեւալու մասին, իսկոյն քանի մը վաշտ զօրք զրկեր են զէպի սահմանագլուխ :

— Մակեդոնոյ ոստիկանութիւնը վերականգնելու համար Դուռը կը պատրաստէ ծրագիր մը : Եւէտացի երկու սպաները այս առթիւ ըրած են իրենց կողմէ դիտողութիւններ. եւրոպացի ընդհ. հրամանատարը Պօլիս հասնի անոր պիտի ներկայացուի պետութեանց զեսպաններու եւ Դրան պատրաստած ծրագիրները վերաքննելու համար : Դուռը կը ջանայ եւրոպացի ուղեւորու իրաւունքները սահմանափակել : — Նաշովիչ իր կառավարութեան կողմէ Բ. Դուռը ներկայանալով յայտնեց Պուլկար կառավարութեան բարեկամական ըզգացմունքները զէպի Թուրքիա և ցաւ յայտնեց, որ Մակեդոնոյ մէջ թիւրք պաշտօնեանելը զեռգոտարութիւններ կը յարուցանեն պուլկար ճանապարհորդողներու զէմ :

Ա Ի Ս Տ Ր Ի Ա

«Նա» Բոսնի կը գրէ. Այսօր խօսուեցաւ արտաքին գործերու նախարարութեան դորձառնութեայ մասին. Գրեթէ ըւրր ճառախօսները իրենց գոհունակութիւնը յայտնեցին արտաքին գործերու գեղեցիկ ընթացքին նկատմամբ. մասնաւորապէս ցանկութիւններ յայտնեցին Աւստրո-Ռուսական համաձայնութեան նկատմամբ, որպէսզի այն երկուսի ջանքերով կարգերը վերահաստատուին Պաքանի մէջ :

Գլուխօքի պատասխանելով երիտասարդ չեխերու պատգամաւոր Բրամիր որք կուրանար եւ ուսպետական զաշնակցութեան նշանակութիւնը Աւստրիոյ շահերու նկատմամբ, յայտնեց, որ ե-

րապետական զաշնակցութիւնը կը կազմէ և կազմելու է հիմքը Աւստրո-Հունգարական քաղաքականութեան :

Պ. Բրամիրը յայտնելով թէ բարենորոգումներու արգիւնքը Պաքանի մէջ կատարելի է թէ իրերու բարեփոխում մը առաջ բերէ, մընչեւ որ Թուրքիա չի փոխուի. Եօլոյսովքի յայտարարեց թէ ինքը ըլլորովին հակասակ կ'արժիք է, և թէ Աւստրո-Հունգարիան և Ռուսաստանը համոզուեցան որ Թուրքիա առանց մեղք մը ունենալու անկարող է պահանջուած բարենորոգումները իրագործել, և ստորհամար անոնք վերահսկումի պորձնական քայլն ըրին : Եւ բոլոր պետութիւնները համոզուած են, որ երկու տարիէն ամեն ինչ լաւ պիտի ըլլայ : Քանի որ սեւաւ այդ հիանալի արդիւնքը որ տուաւ իտալացիներու կազմած ոստիկանութիւնը կրէտէի մէջ :

Ի միջի այլոց կօլուսովքի յայտնեց որ մինչդեռ պուլկար կառավարութիւնը ամեն կերպ կը շահուսկի բարենորոգումներու իրագործման, ներկայի կառավարութիւնը ամեն կերպ նախապէ իրեն հնարաւոր պետութիւններու ցանկութեան :

ԱՆԳԼԻԱ

Անգլիական լրացուցիչ ընտրութեանց արգիւնքը ցոյց տուաւ աղատականներուն աճումը. Նիստի մը մէջ Չէմպրլէնի առաջարկուեցաւ Աւստրալիա երթալ և այդ զաղութի զէպի մայր երկիրը ունեցած յարաբերութիւնները կարգի դնել, իսխարարը չը մերժեց, բայց ծրագրի յետաձգումը անհրաժեշտ համարեց :

— Թիպէթի մէջ Անգլիական զօրքը օր լստ օրէ կը յառաջխաղայ. ընթիւններու կողմէ չըլլար և է զիմագրութիւն :

ՅԲԱՆՍԱ

Գոմպ խօսեցաւ ճառ մը և կառավարութիւնը պաշտպանեց կարգ մը զրպարտութեանց զէմ. Ի միջի այլոց նախարարը ըսաւ. «Յերանսայի վարկը երբէք այնքան բարձր չէ եղած որքան այսօր, շնայելով որ ընդդիմականները հակառակը կը պնդեն : Ասոյ ապացոյց իտալիոյ ու Անգլիոյ հետ մեր կնքած դաշինքները և նախապահի օտար մայրաքաղաքներու մէջ տեսած սիրալիք ընդունելութիւնը : Մեր սրտագին իղձն է իրականացած տեսնել ընդհ. խաղաղութեան գեղեցիկ երազը » :

Յետոյ Գոմպ օտարներ կուսակցութիւններուն առաջարկեց յանուն ուժեղագրական կարգերու

զէպի յառաջ զարգացման միանալ միապետականներու և ազգայնականներու զէմ :

ԻՍՏԱՆԻՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ

Իտալական թերթ մը կը յայտնէ, որ իտալիոյ արտաքին գործերու նախարարը միտք յայտնած է, թէ ինք Ռուս ճարտական տաղանակին խաղաղ լուծմամբ մը վերջանալուն չի հաւատար :

Անգլիական թերթ մը Պերլինէն հեռագիր մը ընդունած է, որ հետեւեալը կը հաղորդէ.

Ռուս կառավարութիւնը բոլոր պետութեանց յայտարարած է որ ինք պիտի յարգէ պետութեանց բոլոր այն իրաւունքները Մանչեսթրի մէջ որ գծուած են Չինի կ'պետութեանց միջեւ կնքուած դաշնագրութեանց միջեւ :

Հաւաստի գործակալութիւնը Սէուէլէն կ'իմանայ թէ ճարտար զեպանը կրկին Բօրէլայի կայսեր գիտեր է որ ճարտար հովանաւորութիւնը ընդունէ : Մինչեւ օրս այդ գիտումները յայտնուելու չուեն, բովհետեւ Բօրէլայի կառավարութիւնը յայտարարել է թէ ինք Ռուս ճարտական Բօրէլայի մասին եղած համաձայնութեան համեմատ պիտի վարուի :

— Լոնտօնի թերթերը կը հաղորդեն որ ճարտական զեպանաւան մէջ Թուրքիոյ հեռագրի ստացուելէ, որուն մէջ կտուի թէ Ռուսիոյ պատասխանը բարեյայտնու չէ, չը պիտի ընդունուի և եթէ Ռուսիա իր որոշումը չը փոխէ, ճարտար պարտաւորուած զէնքի պիտի գրմէ :

— Բէքիէն կը հեռագրեն որ զեսպանութիւնները ստոյգ տեղեկութիւններ ստացած են որ Ռուս կառավարութիւնը Սիբերիոյ երկաթուղիով երկու զօրքաբաժին զօրք զրկած է զէպի մայրաքաղաք Արեւելք :

Է. ԱԿՈՒՆԻ

«ԿՈՒՆԱՍԵՆՆ ԿԵՐՔԵՐ» Գրն 3 Ֆր. 20 սթ. Գրեւելու համար գրմել Վուսնա Բարկէն Սլենի ընթացարանին վարչութեան : Ըանապարհածախսը գնողին վրայ է : Դրամը կանխիկ վճարելի :

ՄԵՐ ԲԱԺ ԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր բաժանորդներէն կը խնդրուի, որ փութացնեն մեզ զրկել իրենց բաժնեգրիները և յետաձայն պարտքերը, Պէտք է գիտնալ որ պարտաճանաչութիւնը առաքնութիւն մըն է :

Отговорникъ Мурадъ-Ераносянъ

Цедатинча „Взаимность“ Варна